ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

«28» մարտի 2012թ. հ. 224

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԿ ԻՐԱՎԱԲԱՆ
ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ

Հարգելի պարոն Հայրապետյան,

Ի պատասխան ՀՀ Ազգային ժողովի նախագահ Սամվել Նիկոյանին ուղղած Ձեր 21.03.2012թ. հարցմանը՝ տեղեկացնում եմ, որ Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքի սպասարկման և կատարելագործման աշխատանքները շարունակական բնույթ են կրում և դրանք իրականացնում է Ազգային ժողովի աշխատակազմի քարտուղարության Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքի սպասարկման բաժինը:

Հարկ է նշել, որ 2009թ. կայքի նոր դիզայնի համար Ազգային ժողովը ZOOM GRAPHICS ընկերությանը վճարել է հարյուր հազար ՀՀ դրամ, 2010թ. USAID-ի կողմից ֆինանսավորվող «ՀՀ Ազգային ժողով և ԱՄՆ ՄԶԳ համատեղ ծրագրի» շրջանակներում կատարելագործվել է կայքի որոնման համակարգը, իսկ 2011թ. ստեղծվել է կայքի ֆրանսերեն տարբերակը, որի թարգմանությունն իրականացվում է Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովի «Նորիա» ծրագրի շրջանակներում:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏ,
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Թ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ